Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտություն /9 դասաժամ/ առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթի անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում /Ձև 1/,

- մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

- անձը հաստատող փաստաթուղթ

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

- ինքնակենսագրություն /Ձև 5/,

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

- որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

- Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են դեկտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 24-ին ժամը 11^{00}-ին, ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Մասիս, Բ. Մարտիրոսյանի 1/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093.54-33-20) հեռախոսահամարով: